

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2021-2026թթ.

«Երևանի Ա. Չեխովի անվան հ.55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԿՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



Զարգացման ծրագրի իրավական հիմքերը

- ✓ ՀՀ Սահմանադրություն
- ✓ «Երեխայի իրավունքների մասին » կոնվենցիա
- ✓ Աշխատանքային օրենսգիրք
- ✓ «Կրթության մասին » ՀՀ օրենք
- ✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- ✓ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- ✓ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- ✓ Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- ✓ «ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
- ✓ Դպրոցի կանոնադրություն
- ✓ Դպրոցի ներքին իրավական ակտեր
- ✓ Կրթության ոլորտը կարգավրող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ, հրամաններ կարգեր

Զարգացման ծրագրի իրականացման ժամանակահատվածը

2021-2026 թվականներ

Զարգացման ծրագրի նպատակը

Պետության, հասարակության և անհատի զարգաման առաջնահերթություններից բխող բարձրակարգ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն զարգացած, հայրենասեր և մարդասեր անհատի ձևավորումը՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա:

Զարգացման ծրագրի խնդիրները

- ✓ Առաջիկա 5 տարում զարգացման առաջնահերթությունների կանխորոշում և կրթության որակի բարելավում:
- ✓ Դպրոցի ներքին նորմատիվ իրավական ակտերի վերաձևակերպում այնպես, որ բխեն ծրագրում շարադրված առաջնահերթություններից և կրթության քաղաքականության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներից:

- ✓ Բարձրակարգ և ոլորտի առաջատար մասնագետների ներգրավում՝ սովորողների շրջանում սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով՝ դպրոցում ստեղծելով մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պայմաններ, արժանապատիվ վարձատրություն, հարգանքի, համագործակցության և փոխվստահության մթնոլորտ:
- ✓ Այնպիսի կրթական ծրագրերի և գործողությունների մշակում, որոնք կապահովեն կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը, կնպաստեն նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների և մոտեցումների ներդրմանը, կապահովեն արդիականացված կրթական և առողջ միջավայր, որը համապատասխանում է համայնքի կարիքներին և արդի կրթության պահանջներին և կնպաստի սովորողների էմոցիոնալ ինտելեկտի զարգացմանը, քննադատական մտածողության ձևավորմանը:

Զարգացման ծրագրի տեսլականը/առաքելությունը

Մինչև 2026 թվականը դառնալ հասարակության, տնտեսության, պետության զարգացող պահանջներին համապատասխան, տեսական ու կիրառական գիտելիքներ, գործնական հմտություններ ու ժամանակակից և նորարարական կարողություններ տրամադրող առաջատար հանրակրթական դպրոցներից մեկը հանրապետությունում:

Զարգացման ծրագրի ակնկալվող արդյունքները

- ✓ Երեխայի՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացում՝ հիմնվելով գործող օրենսդրության վրա:
- ✓ Կրթության գաղափարախոսական հենքի ապահովում՝ հենվելով պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա:
- ✓ Որակյալ կրթության մատչելիության ապահովում:
- ✓ Սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով:

Զարգացման ծրագրի ֆինանսավորման աղբյուրները

- ✓ Պետական բյուջե
- ✓ Արտաբյուջետային միջոցներ

- ✓ Դրամաշնորհներ
- ✓ Բարերարներ և նվիրատուներ
- ✓ Շրջանավարտներ

Զարգացման ծրագրի իրականացնողներ

Դպրոցի համակազմ՝ դպրոցի շահառուների հետ համագործակցությամբ։

Զարգացման ծրագրի վերահսկողության մեխանիզմները

Ծրագրի իրականացման գործընթացը վերահսկվելու է սույն ծրագրի մշակված միջոցառումների միջոցով, որոնք պարբերաբար կարող են փոփոխվել և հարստացվել։ Վերահսկողության միջոցով իրականացվելու է հաստատության արտաքին և ներքին արդյունավետության գնահատում։ Վերահսկողությունը իրականացվելու է այն հավանության արժանացրած կառավարման խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն։

Զարգացման ծրագրի հեղինակ՝ Դիանա Մինասյան

Դպրոցի համառոտ տեղեկանք

«Երևանի Ա. Չեխովի անվան հ.55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Լիցենզիայի համար՝ N 416, 17.03.2006թ.

Լիցենզիայի համար՝ N 1233, 02.08.2018թ.

Հասցե՝ ք. Երևան Մարշալ Բաղրամյան պող., 16 շենք

Հեռ.

- տնօրեն՝ +374-10-526422
- ուսուցչանոց՝ +374-10-560600

Էլեկտրոնային հասցե՝ school55@ schools.am

Կայք՝ www.chekhov.am

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագիրը այն հիմնարար փաստաթուղթն է, որի վրա խարսխվում է դպրոցի առաջիկա հինգ տարիների կրթական և դաստիարակչական գործունեությունը: Զարգացման ծրագիրը ձևակերպում է առաջիկա հինգ տարիների ռազմավարությունը, ներառյալ այն նպատակներն ու խնդիրները, որոնք նախանշում են զարգացման հիմնական ուղիները, դրանց իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը, ինչպես նաև այն ռեսուրսային հենքը, որով պայմանավորված է ծրագրի արդյունավետ իրականացումը:

2021-2026թթ. զարգացման ծրագիրը մշակվել է համապարփակ վերլուծության արդյունքում՝ վերջին մի քանի տարիների կտրվածքով, ինչպես նաև կրթության ոլորտում այս պահին իրականացվող արմատական փոփոխությունների հիմնական ուղենիշերի հիման վրա, որոնց արդյունքում վերանայվելու է մինչ այժմ գոյություն ունեցող կրթության պարադիգմը՝ շեշտը դնելով ստեղծագործող մարդու և ապագա քաղաքացու կրթության և դաստիարակության վրա: Ծրագրի նպատակներն ու խնդիրները ձևակերպվել են՝ հիմնվելով հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման հիմնական երկու բաղադրիչների վրա.

- ✓ Ուսումնական բնագավառների և կրթության բովանդակության բաղադրիչները,
- ✓ Շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները՝ կարողունակությունները:

Ծրագիրը մշակելիս իրականացվել են ներկայացուցչական հարցումներ Երևանի Ա. Չեխովի անվան հ.55 հիմնական դպրոցում մի շարք ծնողների և աշակերտների շրջանում, որի արդյունքները ներառվել են զարգացման ծրագրի տարբեր հատվածներում: Մշակման ընթացքում խորհրդատվական հանդիպումներ են տեղի ունեցել ոլորտի հայտնի մասնագետների, փորձագետների կառավարման խորհրդի անդամների, շրջանավարտների, ինչպես նաև համայնքի այլ դերակատարների հետ՝ բացահայտելու լրացուցիչ կարիքները և կրթության ժամանակակից միտումները:

Ծրագրի մշակման ընթացքում կազմակերպվել են կարիքների բացահայտման քննարկումներ, կազմվել են հարցաթերթիկներ, վեր են հանվել որակի կառավարմանը, մեթոդական գործիքակազմին, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներին,

ռիսկերի արդյունավետ գնահատմանը առնչվող խնդիրները, որի արդյունքում կատարվել են համալիր վերլուծություններ և առաջադրվել հնարավոր լուծումներ և գործողություններ։

ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շենքային պայմաններ.

Առկա իրավիճակ. Երևանի Ա. Չեխովի անվան հ.55 հիմնական դպրոցը հիմնադրվել է 1947 թվականին: Դպրոցն ունի բարձր հեղինակություն հասարակության շրջանում, որտեղ առկա են ամուր հիմքեր որակյալ կրթություն մատուցելու համար: Այն ունի երկու մասնաշենք. 2000 թվականին հիմնավերանորոգվել է գլխավոր մասնաշենքը, 2010 թվականին փոխվել են պատուհանները, իսկ 2018 թվականին մասնակի վերանորոգվել են որոշ դասասենյակներ և սանհանգույցներ: Դպրոցի մյուս մասնաշենքը կառուցվել է 1962 թվականին, հիմնանորոգված չէ: Դպրոցի շենքերի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին՝ շենքում առկա են դեպի ներս բացվող ինը պահուստային և երկու հիմնական ելքեր և այն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով (հեռախոսներ, ռադիոհանգույց, բարձրախոսներ):

Առկա խնդիրներ. Դպրոցն ընդհանուր առմամբ ունի վերանորգման կարիք: Այն հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար՝ բացակայում են սովորողների անվտանգ տեղաշարժն ապահովող պայմանները, թեք հարթակները, հատուկ վերելակները, լայն դռները և այլն:

Անվտանգության պայմաններ.

Առկա իրավիճակ. Դպրոցը գտնվում է քաղաքի բանուկ պողոտայում, սակայն ունի բացվող մեծ դարպաս, և արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին: Երեխաների անվտանգությունից ելնելով դպրոցի մուտքը պահպանվում է հատուկ պահպանության ծառայությամբ: Համավարակի տարածման սահմանափակումներից ելնելով՝ ծնողների մուտքը դպրոց սահմանափակվել է:

Առկա խնդիրներ. Դպրոցը ավտոճանապարհային գոտուց հեռացված չէ, ինչը առաջացնում է մի շարք խնդիրներ, քանի որ աշխատանքային օրերին առավոտյան և կեսօրին դպրոցի ելումուտը կաթվածահար է անում պողոտայի երթևեկությունը:

Դպրոցի բակը սալիկապատ է, սակայն գտնվում է ոչ բարվոք վիճակում և վերանորոգման կարիք ունի:

Ուսումնական միջավայր.

Առկա իրավիճակ. Դպրոցն ունի նիստերի դահլիճ, ամֆիթատրոն, մարզադահլիճ, գրադարան, ընթերցասրահ, համակարգչային սենյակ, տեղեկատվական կենտրոն, բուժսենյակ, բուֆետ, ուսուցչանոց, մի քանի առարկայական սենյակներ, կոնֆերանս համակարգ, 40 դասասենյակներ, նախնական զինվորական պատրաստության դասասենյակ, հրաձգարան, շախմատի դասասենյակ, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության ընդհանուր մեկ լաբորատորիա, Կոնֆուցիուսի դասարան։

Առկա խնդիրներ. Մարզասրահը գտնվում է անմխիթար վիճակում, այն գլխավոր մասանշենքի 4-րդ հարկում է, և ամբողջ աղմուկը տարածվում է 2-րդ և 3-րդ հարկերում՝ խանգառելով դասապրոցեսը։ Մարզասրահին կից հանդերձարանը չի համապատասխանում ժամանակակից ստանդարտներին, չկան պահարաններ, լվացվելու հարմարություններ։

Նիստերի դահլիճը ևս ունի վերանորոգման կարիք, դահլիճում հատակը բարվոք վիճակում չէ, նստարանները հին են, բացկայում է լուսային տեսաձայնային ժամանակակից համակարգը։

Դպրոցն ունի ընդամենը մեկ փոքրիկ լաբորատորիա բոլոր բնագիտական առարկաների համար, որից ըստ մեր կողմից իրականացված հարցումների՝ աշակերտների 89%-ը չի օգտվում։

Բացի այդ, դպրոցում չկան ռոբոտաշինության, ծրագրավորման, պատմության աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, երաժշտությանսենյակներ, տեխնոլոգիա առարակի դասասենյակ՝ արհեստանոց։

Դպրոցը չունի ճաշարան, սակայն ունի բուֆետ, որը չի շահագործվում։

Դպրոցի տեղեկատվական հագեցվածությունը.

Առկա իրավիճակ. Դպրոցում առկա է միայն մեկ համակարգչային սենյակ՝ ոչ համապատասխան գույքով, համակարգիչները հին են և ոչ բավարար քանակի և ընդամենը երկու էլեկտրոնային գրատախտակ, այնինչ, ժամանակակից տեխեկատվական տեխնոլոգիաների գերարագ զարգացող աշխարհում, համակարգչային բազային գիտելիքների առկայությունը ծայրահեղ անհրաժեշտությու է։ Դպրոցն ունի 10275 անուն գրականությամբ գրադարան։

Առկա խնդիրներ. Դպրոցն ունի ընդամենը 20 անուն էլեկտրոնային գրականություն։ Ժամանակակից թվային աշխարհում, երբ տեղեկատվության մեծ մասը ինտերնետում արագ հասանելի է, անհրաժեշտ է ավելացնել թվային գրականության ծավալը։ Ինչպես

նաև դասասենյակները անհրաժեշտ է համալրել առնվազն մեկական համակարգչով:

Դպրոցն ունի ինտերնետային կայք, որը մոտ 2 տարի է չի թարմացվել: Առկա տեղեկատվությունը ժամկետանց է:

Ուսումնական գործընթացի մասնակիցներ.

Առկա իրավիճակ. Դպրոցում աշխատում է 84 ուսուցիչ: Աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 1440 է:

Առկա խնդիրներ. Վերջին մեկ տարվա ընթացքում ուսուցիչների թիվը կրճատվել է 10-ով: Նվազել է նաև ատեստավորման միջոցով տարակարգ ստացած ուսուցիչների թիվը 10-ից հասնելով 6-ի: Ինչպես նաև վերջին հինգ տարիների ընթացքում էականորեն նվազել է աշակերտների թիվը՝ 1707-ից հասնելով մոտ 1440-ի:

Ֆինանսական միջոցներ.

Առկա իրավիճակ. Դպրոցի միջոցները գոյանումեն պետական բյուջեի միջոցների և լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման արդյունքում: Սույն ուսումնական տարվա ընթացքում դպրոցը բացի անգլերեն և ռուսերեն առարկաներից, սկսել է մատուցել նաև վոլեյբոլ ուսանելու ծառայություն:

Առկա խնդիրներ. Դպրոցում 31.12.2020 թվականի դրությամբ առկա է 8 094 500 (Ութ միլիոն իննսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ **պակասուրդ:** Այնուհանդերձ անգլերեն և ռուսերեն լեզուների լրացուցիչ կրթական ծառայությունների վճարը նախորդ տարվա համեմատ սահմնվել է ամսեկան 2500 ՀՀ դրամ:

Մեր կողմից անցկացված հարցումների արդյունքում պարզ դարձավ նաև, որ հարցմանը մասնակցած աշակերտական խորհրդի անդամների վոլեյբոլ ուսանելու ծառայությունից ոչ ոք չի օգտվում, պարզ չէ ինչ սկզբունքով է կատարվել նման ծառայության ընտրությունը:

Կրթության որակ.

Առկա իրավիճակ. Դպրոցում դասավանդում են բարձր հեղինակություն ունեցող պրոֆեսիոնալ մանկավարժներ: Ըստ անցկացված հարցման՝ աշակերտների 61 տոկոսը դպրոցի կրթության որակը գնահատել է լավ կամ գերազանց:

Առկա խնդիրներ. Ուսումնական միջավայրի ոչ բավարար լինելու պատճառով՝ ուսուցիչները հնարավորություն չեն ունենում ուսուցումը կազմակերպել առավել գործնական և կիրառելի փորձերի օրինակներով: Ցածր առաջադիմություն ունեն 5-9-րդ դասարանների սովորողների 55%-ը: Ըստ հարցման արդյունքների՝ սովորողների 50%-ը

գնում է դասապատրաստման կրկնուսույցների մոտ: 2020-2021թթ ընթացքում սովորողները չեն մասնակցել առարկայական և հանրապետական օլիմպիադաների, ինչպես նաև վերջին տարիներին, ընդհանուր առմամբ, նվազել է մարզային, հանրապետական, սպորտային, երաժշտական, գեղարվեստի, մշակութային միջոցառումների մասնակիցների թիվը: Տարեց տարի նաև կրճատվել է ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը՝ 2018-2019 ուսումնական տարում 523 դասալսումից հասնելով 2020-2021 ուսումնական տարում՝ ընդամենը 120-ի: Ըստ ներքին գնահատման հաշվետվության՝ աշակերտների միայն 46,3%-ն է համարում, որ «...ուսուցիչները շատ լավ գիտեն իրենց դասավանդած առարկան...», ինչը բավականին ցածր ցուցանիշ է: Պետք է նշել նաև, որ սովորողների շրջանում նկատվում է նախաձեռնողականության պակաս՝ տարեց տարի նվազում է սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների, իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը:

Աշակերտներին չի բավարարում դպրոցում անցկացվող արտաուսումնական գործընթացների՝ էքսկուրսիաների, արտագնա միջոցառումների, թանգարանների, թատրոնների, կինոյի և այլնի այցելությունների քանակը:

Վերջին երկու տարիների ֆորս-մաժորային իրավիճակներով պայմանավորված՝ դպրոցը փորձել է անցում կատարել հեռահար ուսուցման, ինչն էականորեն ազդել է կրթության որակի վրա:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐԱԿ

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Դպրոցի բարձր հեղինակություն և վարկանիշ	➢ Տեղեկատվական տեխնոլոգիաների ցածր կիրառություն
➢ Ավանդույթների պահպանում	➢ Լաբարատոր սենյակների բացակայություն
➢ Կրթական գործընթացի կատարողականի բարձր ցուցանիշներ	➢ Սովորողների կոմպետենցիաների գնահատման գիտելիքի պակաս
➢ Բնության գրկում դասերի անցկացում	➢ Անհարկի թղթաբարություն
➢ Հեռավար կրթության հարթակների և գործիքների կիրառում ուսուցիչների մեծամասնության կողմից/google classroom, microsoft, kahoot, dproc.am, zoom/	➢ Կոմպետենցիաների վրա հիմնված կրթության կազմակերպման գիտելիքի պակաս
➢ Լեզուների ուսոցում (անգլերեն, ռուսերեն, չինարեն)	➢ Ուսուցիչների ժամային մեծ ծանրաբեռնվածության պայմաններում ցածր աշխատավարձ
➢ Համավարակի ընթացքում հեռավար ուսուցման կազմակերպում	➢ Ուսուցիչների վերապատրաստման կայուն պրակտիկայի բացակայություն
➢ Բարձր կարգապահություն	➢ Գերծանրաբեռնված դասարաններ
➢ Տարակարգ ունեցող ուսուցիչներ	➢ Համավարակի պայմաններում ուսուցչի աշխատանքի բարդացում
➢ Բարձր հեղինակություն ունեցող ուսուցիչներ	➢ Բարձր դասարաններում սովորելու նկատմամբ հետաքրքրության կտրուկ նվազում
➢ Միասնական քննությունների բարձր ցուցանիշներ(մոտ 60%) որակի գնահատական	➢ Ցածր տեխնիկական զինվածություն

➢ Ուսուցիչների ինքնազարգացման մեծ մղում ➢ Արտակարգ իրավիճակներում օպերատիվ փոփոխությունների և արագ արձագանքման մեծ ներուժ ➢ Բարձր հեղինակություն համայնքում	➢ Դպրոցի ինքնավարության խիստ սահմանապակում ➢ Կրկնուսույցների մոտ պարապելու պարկտիկա ➢ Հեռավար ուսուցման արդյունքում որակի զգալի անկում ➢ Սեփական տեսաձայնային դասերի շտեմարանների բացակայություն ➢ Ուսուցիչների արտահոսք պետական դպրոցներից դպրոցում աշխատելու ցանկության բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ**
➢ Ինքնազարգացման բաց ռեսուրսների առկայություն ➢ Բազմատեսակ կրթական ռեսուրսների հասանելիություն ➢ Ծրագրերի հստակեցման և դասագրքերի պարզեցման միտում ➢ Կրթության որակի համապատասխանեցում հասարակական պահանջարկին ➢ Կրթական բարեփոխումների ծրագրերին լայն մասնակցության հնարավորություն ➢ Հանրապետական և միջազգային գրադարաններին հասանելիության ապահովում ➢ Ուսուցչների շարունակական վերապատրաստում	➢ Արտակարգ իրավիճակների առկայություն ➢ Ուսուցչի կերպարի և դպրոցի նկատմամբ հասարակության շրջանում սխալ կարծրատիպերի ձևավորում ➢ Համավարակի պայմաններում կրթության որակի կտրուկ անկում ➢ Դպրոցական կրթության նկատմամբ հետաքրքրության նվազում ➢ Երեխաների արտահոսք մասնավոր և մասնագիտացված դպրոցներ ➢ Կրթության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի շարունակական փոփոխություն ➢ Ցածր վարձատրության պատճառով լավագույն կադրերի արտահոսք

- Արմաթ ինժեներական լաբորատորիայի ստեղծում
- Երկարօրյա ուսուցման կազմակերպում
- Հայտնի և հաջողակ մարդկանց հետ հանդիպումների կազմակերպում՝ սովորելու մոտիվացիան մեծացնելու նպատակով
- Ժամանակակից պահանջներին համապատասխան մարզադահլիճի ստեղծում
- Ձեռնարկատիրական և ֆինանսատնտեսական կրթության խթանում
- Յուրաքանչյուր դասասենյակի համար մեկական համակարգչի ապահովում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նպատակ	Խնդիրներ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Պատաս-Խանատու	Ժամ-կետ	Ֆինանսավորման աղբյուր
Կրթության որակի շարունակական բարելավում և արդի մարտահրավերներին համապատասխանեցում, առավել արդիական և գործնական գիտելիքի տրամադրում	Կրթության արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում	Նոր չափանիշների ներդրման գործողությունների ծրագրի կազմում	Կրթության որակի բարձրացում	Դպրոցի համակազմ	2021-2026թթ.	Պետական բյուջե
Ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական	Ուսուցիչների վերապատրաստման և կարողությունն	Ուսուցիչների համար կազմակերպել մասնագիտական, մանկավարժահոգեբանական,	Բարձր որակավորում ունեցող ուսուցիչներ	Ուսուցիչներ, մեթոդական միավորումներ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված

հմտությունների շարունակական զարգացում	երի զարգացման կայուն և արդյունավետ համակարգի ձևավորում	տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների վերապատրաստման դասընթացներ				ֆինանսավորման այլ աղբյուրներ
Սովորողների անհատական և կրթական կարողությունների կատարելագործում, փափուկ հմտությունների զարգացում	Կրթության որակական խնդիրների բացահայտում	Աշակերտների և ծնողների շրջանում շարունական հարցումների իրականացում, կրթության որակի գոհունակության և կարիքների բացահայտման նպատակով (Թղթային կամ առցանց հարցաթերիկների միջոցով)	Առկա խնդիրների և ակնկալիքների բացահայտում	Ուսուցիչներ, տնօրենի տեղակալներ, տնօրեն	2021-2026թթ.	Պետական բյուջե, Արտաբյուջետային միջոցներ
		Աշակերտների ցանկությունների կորդինացում և վերջնական նպատակի հասցնում	Աշակերտակենտրոն ուսուցում	Ուսուցիչներ, փոխտնօրեններ	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջում
		Աշակերտական խորհրդի ինքնավարության զարգացում		Աշակերտական խորհուրդ	2021-2026թ	Պետական բյուջե,

		(ակումբների, խմբակների, միավորերի ստեղծում, տարբեր միջոցառումների կազմակերպում)			թ.	օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Սովորողի սոցիալական, մշակութային, հոգևոր, բարոյական ինքնության ձևավորում, որը ստացած որակյալ կրթության հիման վրա ունակ կլինի իրականացնել մասնագիտական և անձնային	Հանրային առողջության, կիրառական ռազմագիտության, քաղաքացիական պաշտպանության թեմաներով զարգացնել սովորողների կարողունակությունները	Կառողությունների զարգացում	Ուսուցիչներ, դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Մշակել թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների հարցաշարերը,	Կրթության որակի ստուգում	Ուսուցիչներ, մեթոդական միավորումներ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված

	արդյունավետ ընտրություններ և հաջողությամբ իրացնել սեփական գիտելիքները գործունեության տարբեր ոլորտներում:	հարցաթերթերը և սահմանել ստուգման վերահսկողություն:				ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Դասավանդման որակի վերահսկման նպատակով դասալսումների իրականացում, ստուգողական աշխատանքների անցկացում	Կրթության որակի ստուգում	Մեթոդական միավորումներ, ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,	2021-2026թթ.	Չի պահանջվում
		Մեծացնել ներգրավածությունը առարկայական և հանրապետական օլիպիադաներում, այլ հեղինակավոր մրցույթներում և հաղորդումներում (Օլիմպիական խմբակ, շնորհալիների ակումբ և այլ խրախուսման գործիքներ)	Օժտված երեխաների կարողությունների բացահայտում	Ուսուցիչներ, մեթոդական միավորումներ, Ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Պարբերաբար հրավիրել	Փորձի	մասնագիտաց	2021-	Պետական

		հեղնիակավոր մարդկանց, հայտնի գործարարների, գիտնականների, ոլորտի առաջատար մասնագետների՝ իրենց փորձով կիսվելու համար	փոխանակում	ված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2026	բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպել մասնագիտական կողմնորոշման պրակտիկաներ	Մասնագիտական կողմնորոշում	Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Դպրոցը հագեցնել նորարարական տեխնոլոգիաներով (Արմաթ ինժիներական լաբորատորիա, համակարգչային լիարժեք կահավորված դասասենյակ)	Նորարարական սարքավորումներ	Տնօրեն	2022-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

		Սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով կազմակերպել աշակերտական կոնֆերանսներ, մրցույթներ, վիկտորնաներ, ֆորումներ, ինտելեկտուալ խաղեր	Նախաձեռնողական ության մեծացում, արտադասարանայի ն հմտությունների զարգացում	Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2021-2026թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Դպրոց-պետություն, դպրոց-հայանք, դպրոց-ծնող մշտական երկխոսության ապահովում:	Պարբերաբար կազմակերպել հանդիպում քննարկումներ, երկխոսություններ պետական, համայնքային ներկայացուցիչների, ծնողների և դպրոցի միջև՝ առկա խնդիրների բացահայտման նպատակով	Կարիքների բացահայտում	Լիազոր մարմին, համայնքի ղեկավար, դպրոցի տնօրեն	2021-2026թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Փորձի փոխանակման նպատակով սերտ համագործակցել այլ դպրոցների հետ	Փափուկ հմտությունների ձևավորում	Տնօրեն, տեղաակալներ	2022-2026թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավոր

						ման այլ աղբյուրներ
	Նորարարական պիլոտային ծրագերի ներդրում,	Դպրոցի ինքնավարության, հիերարխիկ կառավարման համակարգից Խորհրդակցական կառավարման անցում	Նորարարական կրթության կազմակերպում	Լիազոր մարմին	2022-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՋՄ

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Բարձր հեղինակություն ունեցող անձնակազմ ➢ Իրենց ոլորտներում առաջատար մասնագետներ ➢ Չինարեն լեզվի ուսուցանում ➢ Մեթոդ միավորումների համակարգված աշխատանք ➢ Ինտերակտիվ դասապրոցեսի անցկացում ➢ Առցանց կրթության գործքիների կիրառում դասապրոցեսում /google-classroom, zoom, kahoot, imdproc.am, khan academy, etc/	➢ Դպրոցում աշխատելու ցածր մոտիվացիա ➢ Ցածր աշխատավարձեր ➢ Ուսուցիչների խրախուսման սահմանափակ հնարավորություններ ➢ Գերծանրաբեռնված և պատասխանատու աշխատանք ➢ Նախորդ տարվա համեմատ ուսուցիչների քանակի կրճատում ➢ Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառման քիչ հնարավորություններ ➢ Վերապատրաստումների սահմանափակ քանակ ➢ Անհարկի թղթավարություն ➢ Լաբորատորիաների, սարքավորումներով հագեցած սենյակների, մասնագիտական սենյակների պակաս ➢ Ստեղծագործական ներուժը լիարժեք իրացնելու հնարավորության պակաս ➢ Միջազգային վերապատրաստումների բացակայություն ➢ Աշխատողների իրավունքների պաշտպանության արհմիությունների բացակայություն ➢ Ուսուցիչների ցածր աշխատավարձի պատճառով մրցակցության բացակայություն ➢ Որոշ առարկաների ուսուցիչների պակաս (Ինֆորմատիկա, տեխնոլոգիա, անգլերեն և ռուսաց լեզուներ)

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ
➢ Մանկավարժների մասնագիտական և մանկավարժամեթոդական վերապատրաստում ➢ Ինքնազարգացման մեծ հնարավորություններ ➢ Մենթոր դպրոց դառնալու հնարավորություն ➢ Լրացուցիչ կրթական ծառայություններ մատուցելուհնարավորություններ ➢ Երկարօրյա ուսուցման կազմակերպում ➢ Ծնող ուսուցիչ առավել սերտ համագործակցություն ➢ Ուսուցման նորարական մեթոդների կիրառում ➢ Ուսուցման գործընթացում տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառման հնարավորություն ➢ Պիլոտային ծրագրերի ներդրում ➢ Փորձի փոխանակում ոլորտի առաջատար կազմակերպությունների և մանկավարժների հետ ➢ Կամավոր ատեստավորման ցանկություն ունեցող ուսուցիչների քանակի ավելացում	➢ Ֆորս-մաժորային իրավիճակների առկայության դեպքում աշխատանքի առավել բարդացում ➢ Ուսուցիչների հոսունություն ➢ Առաջացող փոփոխություններին դժվար ինտեգրում ➢ Ուսուցիչների ատեստավորման կարգի դժվարություններով պայմանավորված մոտիվացիայի անկում, հիասթափություն ➢ Ուսուցիչների աշխատանքի գնահատման պակաս

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նպատակ	Խնդիրներ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր
Մրցունակ, մոտիվացված, աշակերտակենտրոն և կոմպետենտ անձնակազմի ձևավորում:	Պարբերաբար մանկավարժամեթոդական և մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով վերապատրաստումների կայուն համակարգի ձևավորում:	Ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացի շարունակաբար իրականացում	Առավել բարձր որակավորում ունեցող համակազմ: Արդյունքները կհրապարակվեն Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում (https://lib.armedu.am/):	Լիազոր մարմին, տնօրեն, մանկավարժական համակազմ	2022-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Մանկավարժական համակազմի մասնագիտական վերապատրաստումների իրականացում			2022-2026թթ.	
		Ուսուցիչների ժամանակակից դասավանդման մեթոդների յուրացման վերապատրաստումների կազմակերպում		Ուսուցիչներ, տնօրեն	2022-2026թթ.	
	Ուսուցման	Կազմակերպել դասարանի		Ուսուցիչներ,	2021-	Պետական

	գործընթացում ժամանակակից և նորարարական մոտեցումների, տեխնոլոգիաների կիրառում	կառավարման և երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ դասընթացներ:		սովորողների հետ դաստիրակչական աշխատանքի կազմակերպիչ	2026թթ.	բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Նոր չափորոշիչների ներդրման մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստումների իրականացում		Ուսուցիչներ, տօրեն	2022-2023թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ուսուցիչների ներքին գնահատման համակարգի ձևավորում	Ուսուցիչների մոտիվացիան խթանելու նպատակով ներքին գնահատման հիման վրա ստեղծել պարգևատրումների կիրառման պրակտիկա		Տեղակալներ, տնօրեն	2022-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Երկարօրյա ուսուցման վճարովի լրացուցիչ ծառայության իրականացում	Ծնողների զբաղվածության բեռնաթափում Ուսուցիչներին հավելյալ վճարելու հնարավորությու	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, ուսուցիչներ	2022-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

			ն Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներհոսք դպրոց			
	Ապահովել դպրոցում մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պայմաններ:	Ընդլայնել հնրապետական և միջազգային գրադարաններից օգտվելու հնաարավորությունը	Առավել տեղեկացված, հարուստ գիտելիքների պաշար ունեցող մանկավարժներ	Գրադարանի վարիչ, Տնօրեն	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Խրախուսել իքնազարգացումն ու ինքնակրթումը, խթանել ստեղծագործական, հետազոտական հմտությունները			2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջում
		Խրախուսել լավագույն ուսուցիչների մասնակցությունը համապետական մրցույթների/լավագույն ուսուցիչ և այլն/:	Մրցանակներ ունեցող ուսուցիչներ	Տնօրեն	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ուսուցիչների մոտիվացիայի	Կազմակերպել վաստակաշատ	Հարգանք առավել ավագ և	ՏՆօրեն, մասնագիտաց	2022-2026թթ.	Պետական բյուջե,

	բարձրացում Բարձրացնել ուսուցիչների հեղինակությունը դպրոցում:	մանկավարժների մեծարման երեկո	հեղինակություն ունեցող մանկավարժի նկատմամն	ված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ		օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Տարբեր հարթակներում բարձրացնել ուսուցիչների իրավունքների վերաբերյալ հիմնախնդիրներ, նպաստել ուսուցչի համբավի բարձրացմանը հասարակության շրջանում:	Ուսուցչի համբավի և հեղինակության բարձրացում	Մանկավարժական համակազմ	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Ամրապնդել ուսուցչի դերն ու հեղինակությունը		Մանկավարժական համակազմ	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Հարցում անցկացնել ուսուցիչների շրջանում նրանց անհատական կարիքները բացահայտելու նպատակով	Ուսուցիչների կարիքների բացահայտում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ	Մինչև դեկտեմբեր 2021թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ծնող- ուսուցիչ սերտ համագործակցության ամրապնդում	Ծնող-ուսուցիչ կապն ամրապնդելու համար պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ծնողների	Ծնողների կարիքների բացահայտում	Ծնողական խորհուրդ, Մանկավարժական խորհուրդ, դասվարներ	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում

		հետ, անհատակ մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուրին				
		Ամեն դասասենյակում համացանցին ամրացված մեկ համակարգչի ձեռքբերում (ուսուցչի) համար	Դասի առավել ինտերակտիվ վարում, էլեկտրոնային գրանցումների իրականացում	Տնօրեն, Կառավարման խորհուրդ	2022-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ներգրավել բարձրակարգ և ոլորտի առաջատար մասնագետներին սովորողների շրջանում հետաքրքրությունը մեծացնելու նպատակով	Պարբերաբար հրավիրել հայտնի անհատների, ոլորտի առաջատար մասնագետների փորձի փոխանակման, ինչպես նաև սովորողների շրջանում ուսման նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով	Փորձի փոխանակում	Տնօրեն	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման նպատակով՝ պարբերաբար օգտագործել այնպիսի կիրառական ձևեր, ինչպիսիք են՝ Ստեղծագործական	Առավել ինտերակտիվ դասեր	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, ուսուցիչներ, մանկավարժական խորհուրդ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

		հաշվետվություններ ✓ Դաս-սեմինարներ ✓ Դաս-համերգներ ✓ Դաս-երկխոսություններ ✓ Գործնական խաղեր ✓ Դաս-հանդիպումներ ✓ Ինտելեկտուալ խաղեր ✓ Հրապարակային դասեր ✓ Դաս դատավարություններ/ դեբատներ ✓ Դաս- քննարկումներ ✓ Դաս-Դերային խաղեր ✓ Խաղերի տեսություն				
		Ստեղծել հաջողված հրապարակային և տեսաձայնային դասերի առցանց շտեմարան:	Պատրաստի տեսաձայնային դասի առկայություն	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, ուսուցիչներ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Կազմակերպել փոխհամագործակցության	Տարբեր խորագրերով կազմակերպել հանդիպում-քննարկումներ պետական և	Հետադարձ կապի ապահովում	Լիազոր մարմին, տնօրեն,	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով

	հնարավորություններ այլ պետական և ոչ պետական դպրոցների ներկայացուցիչների հետ	ոչ պետական այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ		համայնք		չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ստեղծել հնարավորություն մարզային և համայնքային այլ դպրոցների համար դառնալով մենթորական դպրոց:	Ուսումնասիրել մենթոր դպրոց դառնալու ընթացակարգերը և մասնակցել համապատասխան մրցույթների:	Մենթոր դպրոցի առկայություն	Լիազոր մարմին, տնօրեն, Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, մեթոդական միավորումներ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Ավելացնել վերապատրաստող ուսուցիչների և մենթորների թիվը, դպրոցը դարձնելով նորարարությունների կենտրոն/ Brirish Council, PH International, ինչպես նաև մարզային ուսուցիչների մենթորական կենտրոն	Նորարարական դպրոց	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, ուսուցիչներ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Խթանել համագործակցությունը	Համագործակցության ձևավորում	Տնօրեն,	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի

		միջազգային և տեղական կրթական կառույցների հետ `British Council, US Embassy, Birthright Armenia, FYCA, PH international, etc				պահանջվում

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Ակտիվ, ինքնուրույն միտք և տեսակետ հայտնող աշակերտական խորհուրդ ➢ Դպրոցն ավարտած սաները կրթությունը շարունակում են այլ ուսումնական հաստատություններում (Ավագ դպրոց, քոլեջ, վարժարան) ➢ Բարձր առաջադիմություն ➢ Չեխովի դպրոցի սան լինելու գաղափարի արժևորում ➢ Դպրոցի լրացուցիչ կրթական ծառայություններից (Ռուսերեն, անգլերեն) օգտվելու մեծ քանակ (1000 աշակերտ) ➢ Սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին ➢ Սովորելու, նորը յուրացնելու մեծ ցանկություն և ձգտում	➢ Տարեց տարի նվազող սովորողների քանակ ➢ Միջդպրոցական միջոցառումների պակաս ➢ Սպորտային ակումբների պակաս ➢ Գրադարանից օգտվելու ցանկություն ունեցող սովորողների ցածր տոկոս ➢ Կախվածություն բջջային հեռախոսներից և սոցիալական ցանցերից ➢ Խիտ դասարաններ ➢ Լաբորատորիայից և համակարգչային սենյակներից օգտվելու քիչ հարավորություն ➢ Կրկնուսույցների մոտ հաճախում ➢ Էքսկուրսիաների, միջացառումների, համերգների, քննարկումների պակաս ➢ Օլիմպիադաների մասնակցության բացակայություն
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ**
➢ Սեփական նախաձեռնություններով հանդես գալու հնարավորություն ➢ Ինքնուրույ միջոցառումներ կազմակերպելու մեծ ներուժ ➢ Կամավորական աշխատանք կատարելու հնարավորությունների ստեղծում ➢ Այլ դպրոցների հետ նախաձեռնություններ	➢ Երեխաների գերծանրաբեռնվածությունը դպրոցում և դպրոցից դուրս ➢ Հասարակության արատավոր երևույթների դրսևորում դպրոցում՝ ագրեսիվ վարք, կախվածություն հեռախոսից, կենտրոնացման պակաս ➢ Խիստ սահմանափակումներ՝ համաճարակային իրավիճակով պայմանավորված ➢ Անտարբերության դրսևորումներ հասարակական երևույթների

իրականացնելու հնարավորություններ ➢ Սոցիալական ցանցերի օգտագործում՝ դպրոցի միջոցառումներին առավել մասնակցություն հաղորդելու նպատակով ➢ Լրացուցիչ կրթական ծառայություններից օգտվելու ձգտում ➢ Ձմեռային և ամառային ճամբարներ	նկատմաման

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նպատակ	Խնդիրներ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր
Գիտելիքներով հարուստ, վերլուծական հմտություններ, ինքնուրույն կարծիք և տեսակետ ունեցող, պետականամետ, հայրենասեր, կարեկցող, սոցիալական բարձր պատասխանատվություն ունեցող անհատի ձևավորում:	Մեծացնել գիտելիքների, սովորելու նկատմամբ հետաքրքրությունը:	Կիրառել դասավանդման առավել ժամանակակից և նորորական ինտերակտիվ մոտեցումներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ	Դասավանդման պրոցեսի առավել հետաքրքրքրանալը	Ուսուցիչներ, մեթոդական միավորումներ, ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Առկա լաբորատորիան և առարկայական դասասենյակները ծառայեցնել իրենց նպատակին՝ այնտեղ առավել հաճախ դասեր անցկացնելով	Գործնական գիտելիքների ստացում	Լաբորատորիայի և առարկայական դասասենյակների պատասխանա	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում

		Տեսական գիտելիքը համեմել գործնական օրինակներով, փորձերով,		տու ուսուցիչներ	2021-2026թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Խթանել նորարական միտքն ու ստեղծագործական ունակությունները:	Ակտիվ բանավեճ, քննարկումներ կազմակերպել տարբեր դասարանների սովորողների միջև	Վերլուծական մտածողության զարգացում	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	2021-2026թ թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Գրական ստեղծագործությունների կերպարային վերլուծություններ իրականացնել՝ համագործակցելով դպրոցի արհեստանոցի հետ, ներկայացումներինառարկայական տեսք խաղորդելու նպատակով	Վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացում	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	2021-2026թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Օրվա թեմային առընչվող խաղերի կազմակերպում	Վերլուծական մտածողության զարգացում	Ուսուցիչներ	2021-2026թ թ.	Ֆինանսավորում չի պահանջվում

		Դպրոցում տեղադրել անանուն առաջարկների արկղ՝ սովորողներին ընձեռելով իրեց միտք անկաշկանդ արտահայտելու հնարավարություն	Անկաշկանդ մտքի արտահայտում	Տնօրեն	2021-2026թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Խթանել առարկայական ծրագրերից զատ այլ միջոցառումների կազմակերպումն ու մասնակցությունը:	Ավելացնել առարկայական օլիմպադաներին, հանրապետական օլիմպիադաներին և այլ մրցույթներին մասնակցողների թվաքանակը: Օրինակ «Մեղու», «Կենգուրու», «Կորիզ» և այլն	Օժտված երեխաներին բացահայտելու հնարավորություն	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ		Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Թատերական փոքրիկ ներկայացումների կազմակերպում	Երեխայի տաղանդի բացահայտում	մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2021-2026թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Շարունակել արտագնա դասերի ավանդույթը	Դասին հետաքրքրության հաղորդում	Ուսուցիչներ	2021-2026թ թ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված

						ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Կազմակերպել ինտելեկտուալ մրցումներ դասարանների և այլ դպրոցների միջև	Աշակերտների մոտիվացիայի բարձրացում	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման նպատակով կազմակերպել ցուցահանդես վաճառքներ	Գործարար մտածողության զարգացում	մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Կազմակերպել Չինական մշակույթի օրեր՝ հրավիրելով Չինական մշակույթի տարբեր ներկայացուցիչների	Երկու երկրների հարաբերությունների սերտացում	մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Այցելություն մշակութային օջախներ, հուշահամալիրներ	Հետաքրքրասիրության երևակայության, ինքնուրույն	մասնագիտացված կրթական աջակցությունն	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով

		(Համերգ, թատրոն, կինո, բալետ, օպերա, թանգարաններ, աստղադիտարան)	դատողությունների, դասարանային և գործնական գիտելիքների համեմատության հնարավորություն	երի գծով տեղակալ		չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Մեծացնել սպորտի դերը մեր կյանքում:	Կազմակերպել տարբեր սպորտային մրցումներ դասարանների միջև	Առողջ ապրելակերպ, կարգապահության	մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ,	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Կազմակերպել տարբեր սպորտային միջոցառումներ այլ դպրոցների աշակերտների միջև	Առողջ ապրելակերպ, կարգապահության		2022-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Դպրոցում ստեղծել սպորտային խմբակներ	Առողջ ապրելակերպ, կարգապահության,թիմային մտածողություն	Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Բարձր սոցիալական	Քննարկումներ և սեմինարներ	Բարձր սոցիալական պատասխանատվութ	Սովորողների հետ	2021-2026թ	Ֆինանսավորում չի

	պատասխանատվության ձևավորում:	կազմակերպել սովորողի բարեվարքության և վարվելակերպի էթիկայի վերաբերյալ:	յան ձևավորում:	դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	թ.	պահանջվում
		Կազմակերպել քննարկումներ շրջակա միջավայրի պահպանության թեմաներով	Բարձր սոցիալական պատասխանատվության ձևավորում:	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2021-2026թ թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Կազմակերպել քննարկումներ պետական գույքի, դպրոցի գույքի և մշակութային արժեքների պահպանման թեմայով:		Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2021-2026թ թ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Կազմակերպել զրույցներ, տեսահոլովակների դիտումներ հայրենիքի, ընտանիքի, առողջ ապրելակերպի, ծխախոտի և ալկոհոլի բացասական ազդեցության, գրքի կարևորության, սոց	Դրական արժեհամակարգի ձևավորում	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2021-2026թ թ.	Ֆինանսավորում չի պահանջվում

		ցանցերում առկա վտանգների թեմաներով				
		Կազմակերպել զրույցներ, տեսահոլովակների դիտումներ բռնության, ֆիզիկական և հոգեբանական ճնշման, իրավունքների հավասարության, հանդուրժողականության, անվտանգության թեմաներով	Խտրականության, բուլինգի բացառման հնարավորություն	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Կազմակերպել սոցիալական ծրագրեր (Այցելություն մանկատներ, զորանոցներ, համայնքային մաքրության օրեր, ծառատունկ և այլն)	Սոցիալական բարձր պատասխանատվություն, կարեկցանք	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Կառավարչական որոշումներում աշակերտների ներգրավածության ապահովում:	Տարեկան երկու անգամ հայտարարել աշակերտական ինքնավարության օրեր	Պատասխանատվության զգացում	Այդ օրերին դպրոցի կառավարումը իրականացնում է աշակերտական խորհուրդը: Դասերը ևս	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում

				վարում են իրենք		
	Ամրապնդել սովորող-ուսուցիչ-ծնող կապը:	Ծնող խորհրդի հետ համատեղ կազմակերպել էքսկուրսիաներ	ՀՀ տեսարժան վայրերի հետ ծանոթացում	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2021-2026թթ.	Օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Կազմակերպել արշավներ	Դժվարությունների հաղթահարման ունակություն	Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ	2021-2026թթ.	Օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Ընդլայնել աշակերտական խորհրդի իրավունքներն ու լիազորությունները:	Լրամշակել ներքին կարգապահական կանոնները՝ հստակեցնելով աշակերտների իրավունքների և պարտականությունների շրջանակը:	Պատասխանատվության մեծացմանը	Տնօրեն	2021-2022թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում

		Ստեղծել երաժշտական խումբ, որը կարող է ոչ միայն դպրոցում ելույթ ունենալ, այլ նաև մասնակցել տարբեր մրցույթների, համերգների, փառատոնների	Տաղանդավոր երեխաներին բացահայտելու հնարավորություն	Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		«Մարզերի դպրոցները» խորագրով կազմակերպել մարզային դպրոցներ փոխադարձ այցելություններ	Փորձի փոխանակում		2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Մասնագիտության կողմնորոշման նպատակով՝ այցելություն տարբեր բարձրագույն կրթության ուսումնական հաստատություններ	Մասնագիտության ընտրություն	մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ

Հարցումներ

Սույն զարգացման ծրագիրը գրելու ընթացքում 2021 թվականի սեպտեմբեր ամսին Երևանի Ա. Չեխովի անվան հ.55 հիմնական դպրոցում իրականացվեցին հարցումներ աշակերտական խորհրդի շրջանակներում, որի արդյուքները կներկայացվեն ստորև: Հարցմանը մասնակցում էին 6-9-րդ դասարանի աշակերտական խորհրդի ներկայացուցիչները: Հարցվածների 36%–ը դպրոցի կրթության որակը գնահատել է լավ, 25%-ը գերազանց, 22%-ը բավարար:

Դպրոցի կողմից մատուցվող լրացուցիչ կրթական ծառայություններից օգտվում է հարցվածների 61 տոկոսը: Սակայն վոլեյբոլի դասընթացից հարցվածների շրջանում ոչ ոք չէր օգտվում: Սակայն փոխարենը սովորողները ցանկություն են հայտնել մասնակցել հետևյալ լրացուցիչ ծառայություններին, եթե այդպիսիք իրականացվեն. Առաջին տեղում ծրագրավորումն է՝ 31%, այնուհետև լող՝ 28%, մաթեմատիկա՝ 19%, ֆիզիկա և չինարեն 17%, պար և քիմիա 14% և այլն: Ստացվածից հետևություն, որ վոլեյբոլի փոխարեն կարելի է մատուցել այլ ծառայություններ, որոնց պահանջարկը ավելի շատ կա:



Այն հարցին թե ի՞նչ հաճախականությամբ են օգտվում լաբարատորիայից կամ համակարգչային սենյակից հարցվածների 89%-ը պատասխանել են, որ կամ չեն օգտվում, կամ օգտվում են տարին մեկ անգամ: Այսինքն, նշյալ դասասենյակները իրենց նպատակի չեն ծառայում: Այն հարցին թե ի՞նչ հաճախականությամբեն օգտվում պրոյեկտորներից, հարցվածների 42%-ը պատասխանել է, որ չեն օգտվում կամ օգտվում են տարին մեկ անգամ, 53 %-ը՝ ամիսը մեկ անգամ:

Այն հարցին, թե ինչ սենյակներ կցանկանային ունենալ, սովորողները պատասխանել են. պատմության սենյակ 47%-ը, հարցվածների 42%-ը կցանկանար քիմիայի լաբորատորիա ունենալ, 35%-ը՝ ռոբոտաշինության, 33%-ը՝ երաժշտության, 31%–ը ֆիզիկայի և այլն:



Ըստ հարցման արդյունքների աշակերտների 50%-ը հաճախում է կրկնուսույցների: 6-9-րդ դասարանցիների հարցման արդյունքում երկարօրյա ուսուցմանը դեմ է արտահայտվել հարցվածների 47%-ը, սակայն նույն հարցին տարրական դասարանների հարցված ծնողների 63%-ը պատասխանել է, որ կցանկանար դպրոցում տեսնել երկարօրյա լրացուցիչ կրթության ծառայություն:

Ճաշարան ունենալու ցանկություն է հայտնել հարցվածների 67%-ը: Հարցվածների 92%-ը ցանկություն է հայտնել հաճախելու թե՛ ձմեռային, թե՛ ամառային ճամբարներու: Ըստ հարցման արդյունքների 67%-ը էքսկուրսիաների գնում են կիսամյակը կամ տարին մեկ են անգամ, ինչից դժգոհում էին հանդիպման ընթացքում:

Եվ վերջում, հարցվածների 69%-ը պատասխանել է, որ կամ չի օգտվում գրադարանից, կամ էլ օգտվում է տարին մեկ անգամ:

Ամփոփելով հարցման արդյունքները, ինչպես նաև աշակերտական խորհրդի հետ հանդիպումների օրվա ընթացքում հնչած առաջարկները՝ կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

Աշակերտական խորհրդի կողմից հնչած առաջարկներ
1. Լաբորատոր և համակարգչային դասասենյակների առավել հաճախակի օգտագործում
2. Միջդպրոցական հանդիպումների, մրցումների և միջոցառումների ացկացում
3. Սպորտդահլիճի վերանորոգում
4. Այլ լեզուների ուսուցում(մասնավորապես՝ գերմաներեն, իսպաներեն, իտալերեն)
5. Լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում, այնպիսիք ինչպիսիք են՝ (ըստ առաջահերթության՝ ծրագրավորում, լող, մաթեմատիկիա, չինարեն, ֆիզիկա և քիմիա)
6. Դասի ընթացքում դասավանդման առավել ժամանակակից, ինտերակտիվ մեթոդների կիրառում
7. Ճաշարան ունենալու ցանկություն
8. Տարրական դասարանների համար երկարօրյա ուսուցման կազմակերպում
9. Ձմեռային և ամառային ճամբարներ գնալու հնարավորության ստեղծում
10. Առավել հաճախ էքսկուրսիաներ, տարբեր միջոցառումներ, թանգարաններ, համերգներ, թատրոններ գնալու հարավության ընձեռում
11. Պատմության, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության առանձնացված դասասենյակների, ինչպես նաև ռոբոտաշինության և երաժշտության սենյակների ստեղծում
12. Արվեստի, սպորտի, գիտության ներկայացուցիչների հետ հանդիպումներ
13. Դասղեկների զրույցները աշակերտների հետ ավելի ինտենսիվ դարձնելու հնարավորություններ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
➢ Կուռ թիմ ➢ Համակարգված փաստաթղթաշրջանառություն ➢ Պարտադիր հաշվետվությունների առկայություն ➢ Գործառույթների հստակ տարանջատում ➢ Viber խմբերով կապ դասարանների ծնողների և դասղեկների միջև	➢ Առցանց փաստաթղթաշրջանառության համակարգի բացակայություն ➢ Աշակերտների, ծնողների կողմից ներքին իրավական ակտերի ոչ բավարար իմացություն ➢ Համագործակցային գործունեության պակաս ➢ Կառավարման խորհրդի հաճախակի փոփոխություն ➢ Ինքնուրույնն նախաձեռնությունների պակաս
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՎՏԱՆԳՆԵՐ/ՌԻՍԿԵՐ**
➢ Հորիզոնական կառավարման անցնելու նախադրյալներ ➢ Առավել համակարգված գործելու հնարավորություն ➢ Ծնողական խորհրդի առավել ակտիվ մասնակցություն դպրոցական կյանքին ➢ Շրջանավարտների համախմբում դպրոցի շուրջ ➢ Հասարակական և այլ բարեգործական ընկերությունների հետ համագործակցության ընդլայնում	➢ Դպրոցի ինքնավարության նվազում ➢ Լիազորությունների սահմանափակում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նպատակ	Խնդիրներ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր
Համագործակցային, մասնակցային սկզբունքի հիման վրա կառավարման արդյունավետության բարձրացում:	Կառավարման ներկա մոդելը դարձնել առավել մասնակցային:	Ուսումնասիրել դպրոցների կառավարման ներկա մոդելները, փորձելով տեղայնացնել լավագույն փորձը	Կառավարման լավագույն փորձի բացահայտում	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Հորիզոնական կառավարման մոդելի ներդրման նպատակով իրականացնել լիազորությունների և պատասխանատվություն ների բաշխում	Հորիզոնական կառավարման մոդելի ներդրում	Տնօրեն	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Խորհրդակցական մարմիններ ծանոթացնել միջազգային առաջավոր փորձին	Կառավարման լավագույն փորձի բացահայտում	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
	Ապահովել արդյունավետ համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև:	Խորհրդակցական մարմինների սերտ և փոխկապակցված փոխհամագործակցություն (Մանկավարժական խորհուրդ, ծնողական	Կրթության որակի բարելավում	Խորհրդակցական մարմիններ	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում

		խորհուրդ)				
	Խրախուսել խորհրդակցական մարմինների նախաձեռնությունները:	Մշտապես կատարելագործել տնօրենության կառավարման կարողությունները՝ ծրագրերի մշակման, ռեսուրսների ներգրավման, կոմունիկացիայի, վարչական աշխատանքի արդիականացման, արդյունավետության բարձրացման և այլ ուղղություններով	Կառավարման ժամանակակից հմտությունների տիրապետում	Տնօրեն	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Խրախուսել ակտիվ նախաձեռնություններով հանդես եկողներին	Նախաձեռնությունների թվի ավելացում	Խորհրդակցական մարմիններ, աշակերտական խորհուրդ	2021-2026	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Դպրոցում TEDTalk-երի կազմակերպում	Մոտիվացիայի ավելացում՝ հաջողության պատմություններից	Տնօրեն	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորմ

						ան այլ աղբյուրներ
	Զարգացնել կառավարման և խորհրդակցական մարմինների ներկայից հմտությունները:	Կազմակերպել տարբեր սեմինարներ, վերապատրաստումներ՝ մասնակցային կառավարման մոդելը առավել արդյունավետ կիրառելու համար	Կառավարման առավել արդյունավետ մոդել	Վարչական անձնակազմ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Զարգացնել մ/մ կարողությունները՝ դարձնելով դրանք բովանդակային նորարարությունների մշակման և ներդրման հարթակներ:	Նորարարական մեթոդներով դասավանդում	Մեթոդական միավորումներ, Ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
		Զարգացնել աշակերտական խորհրդի կառողությունները	Աշակերտների ինքնուրույնության մեծացում	Աշակերտական խորհուրդ,	2021-2026թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում
		Դասղեկների համար կազմակերպել վերապատրաստումներ՝ դասարանի արդյունավետ կառավարման համար	Դասարանների արդյունավետ կառավարում և կազմակերպում	Տնօրեն	2021-2026թթ.	Պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ
